ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՀՏԴ 316.36

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ընտանիքը պատմականորեն եղել և մնում է հիմնական այն սոցիալական ինստիտուտը, որն ապահովել է հասարակության վերարտադրումը: Ընտանիքն է ձևավորում անհատի զարգացումը նրա բոլոր դրսևորումներով՝ ֆիզիկական, մտավոր, բարոյական և հոգևոր և հիմք է ստեղծում նրան ձևավորող բոլոր այլ սոցիալական ինստիտուտների համար: Ընտանիքը, հիմնական մշակութային արժեքները, կոդերը և մեխանիզմները փոխանցելով սերնդեսերունդ, իրականացնում է ազգային, մշակութային ու սոցիալական կյանքի վերարտադրությունը: Ընտանիքում են ձևավորվում հասարակությունում ընդունված նորմերի ընկալումը, հասարակական գործունեության ու աշխատանքի նկատմամբ վերաբերմունքը և այլն:

Դեռևս հնագույն ժամանակներից մեր ազգի համար ընտանիքը կարևոր, նույնիսկ առաջնային տեղ է գրավել: Ընտանիքի շնորհիվ մենք, ենթարկվելով դարերի փորձությանը և կրելով ժամանակի ազդեցությունը, շարունակում ենք պահպանել մեր ազգային նկարագիրը: Ընտանիքը համարվում է կարևոր գործոն անհատի սոցիալական ստատուսի գնահատման համար: Կարելի է ասել, որ հայկական ընտանիքում դրսևորվում են ընտանիքը բնութագրող հատկանիշները: Այսինքն՝ մեզ մոտ մեծ է ընտանիքի դերը մեր սովորույթների, արժեքների, նորմերի փոխանցումն ապահովելու գործընթացում: Հենց ընտանիքում են ձևավորվում մեր դավանանքի, ազգի պատկանելիության զգացումը: Ընդհանուր ասած՝ հայկական ընտանիքը հիմքն է մեր հասարակության ձևավորման ու զարգացման համար:

Անցած դարի վերջին 20-ամյակից հայկական ավանդական ընտանիքի մոդելն ու հասարակական ընկալումները սկսել են փոխվել: Դրան նպաստել են նաև տարածաշրջանում պատերազմները, դրանց հետևած տնտեսական և սոցիալական ցնցումները: Հայ ընտանիքի կայուն հիմքերի թուլացումը տեղի է ունենում նաև մեր օրերում՝ հատուկ, նորաձև փոփոխությունների ազդեցության ներքո: Փորձեր են արվում «գլոբալացնել» հայկական ավանդական ընտանիքն ու ընտանեկան ավանդույթները: Օտար բարքերի անարգել թափանցումը Հայաստան, դեռևս ոչ լիարժեքորեն ձևավորված հասարակական հարաբերությունները, ընտանիքի վերաբերյալ ազգային բովանդակությամբ պետական օրենքների անբավարարությունը ժամանակակից հայ ընտանիքը կանգնեցրել են մի շարք լուրջ խնդիրների առջև, որոնք խորը մտահոգության տեղիք են տալիս:

Այդ երևույթների հիմնական պատճառ է հանդիսանում ազգային արժեհամակարգի փոփոխությունը: Հայ ազգը դարեր շարունակ ուներ իր որոշակի արժեքային համակարգը, որոշակի բարոյական նորմերը, որոնց հետևում էր հանրությունն իր ազգային, առօրյա կյանքի ընթացքում: Մերօրյա ժամանակներում, այսպես կոչված, «հին նորմերի» հե-

տնորդները համարվում են հետամնաց և ոչ-բակվում են որպես հին մտածելակերպի կրողներ: Այսօր երիտասարդների մոտ ընտանիք հասկացողությունն իր ավանդական արժեքը չունի, որովհետև ընտանիք ստեղծելու միտումը փոխվել է հանրային կենսաբնկալման մեջ:

Այսօր՝ Հայաստանի սոցիալ-տնտեսական պայմաններում, երիտասարդ ընտանիքը հնարավորություն չունի բնակարան ձեռք բերելու, որի պատճառով նաև հետաձգվում են ամուսնությունները: Նաև երեխաների թիվը երիտասարդ ընտանիքում խիստ նվազագույնի է հասցվել: Հաճախ երիտասարդ ընտանիքներին օգնում են նրանց ծնողները: Երբեմն դա լինում է ֆինանսական օգնության տեսքով: Այդ պատճառով ծնողները, երբեմն նույնիսկ բարեկամները, իրենց պարտքն են համարում երիտասարդների ընտանեկան խնդիրները լուծողի դերը ստանձնել:

Այսօր վտանգված է հայ ընտանիքի ամրությունը, հետևապես՝ խարխլվում են մեր ազգային հիմքերը: Եթե նախկինում հայոց կենցաղին գրեթե խորթ էր ամուսնալուծությունը, ապա մեր օրերում այն զգալիորեն աճել է:

Հատկապես անհանգստացնող է այն փաստը, որ ամուսնալուծությունների մեջ մեծ տեղ են զբաղեցնում երիտասարդ ընտանիքները: Դրա պատճառները բազմազան են, բայց այդ ամենի հետևանքով մենք ունենում ենք միայնակ մայրերի և անօթևան երեխաների թվի աճ: Սա լուրջ խնդիր է մեր հասարակությունում ընտանիքների պահպանման համար: Տեղեկատվական միջոցների զարգացման, նաև գլոբալացման հետևանքով ինֆորմացիայի աճող հոսքերը մեծ ազդեցություն են ունենում մեր հասարակության մտածելակերպի վրա: Այլ ազգերին բնորոշ նորմերից մի շարք արժեքների ընդօրինակումը հատկապես երիտասարդների շրջանում հիմք են ծառայում մեր արժեքների թուլացման համար, ինչը նաև հանդիսանում է ամուսնալուծությունների թվի աճի պատճառներից մեկը:

Ընտանիքների թվի նվազման՝ որպես կարևոր հետևանք է հանդիսանում ծնելիության նվազումը, ինչը բացասականորեն է ազդում մեր երկրի տնտեսության վրա: Այն հանգեցնում է մարդկային կադրերի նվազման, ներքին աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի անհամապատասխանության, որը հանգեցնում է արտադրողականության նվազման: Գիտնականները նշում են նաև մի հետաքրքիր կախվածություն. այն երկրների երիտասարդները, որտեղ բարձր է գնահատվում ջանասիրաբար աշխատելու և նյութական հաջողության հասնելու էթիկան, հաճախ համապատասխանում են «ընտանեկան ուղղվածությամբ» մոդելին:

Պանդխտությունը հայոց դարավոր ցավն է՝ իր բոլոր անցանկալի հետևանքներով: Այսօր էլ երկրից մեկնած շատ հայորդիներ, լքելով ընտանիքը, ամուսնանում են օտարների հետ: Եթե առաջներում արտագնա աշխատանքի մեկնում էին միայնակ, ապա այսօր մեկնում են նաև ընտանիքներով: Դա արտաքուստ ունի իր դրական կողմը՝ ամուսինները միասին են լինում, և հիմնականում բացառվում է ամուսնու կողմից նոր ընտանիք կազմելու հնարավորությունը: Բայց, իրականում, նորաստեղծ շատ ընտանիքներ կտրվում են հայրենիքից, երկիրը դատարկվում է, ազգը զրկվում է երիտասարդ, եռանդուն աշխատուժից: Երեխաները հաճախում են օտարալեզու դպրոցներ, զրկվում մայրենի լեզվով կրթություն ստանալու հնարավորությունից, կտրվում են ազգային արմատներից:

Անցած 20 տարիների ընթացքում անկախ Հայաստանում ծնվել և մեծացել է մի սերունդ,

որն ունի իր սեփական պատկերացումներն ու դիրքորոշումները ժամանակակից զարգացումների վերաբերյալ: Դրա հետ մեկտեղ, այն մի սերունդ է, որը կորոշի Հայաստանի սոցիալական դիմագիծը մոտ ապագայում: Հենց նրանք կդառնան նոր կյանքի տերերը, հենց նրանցից կախված կլինի այն, թե ինչպիսին կլինի մեր երկիրը 10-15 տարի հետո: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է իմանալ այսօր, թե ովքեր են նրանք, ինչ են ցանկանում, ինչի են ձգտում, ինչ են սիրում և ինչ են ատում:

Մեր հետազոտությունները փաստում են այն մասին, որ երիտասարդական ենթամշակույթը շատ բազմազան է և բազմաբնույթ: Դա տարբեր խմբերի, հետաքրքրությունների, ձգտումների, հույսերի և հիասթափություններիի մեծ խճանկար է: Այդ խճանկարը դեռ ոչ ոք խորապես չի ուսումնասիրել: Նախ՝ դա հասարակության այն ժողովրդագրական հատվածն է, որի մասնաբաժինը ժամանակի ընթացքում փոքրանում է մեր հասարակության ծերացման գործընթացների պատճառով: Երկրորդ՝ դա հենց այն հատվածն է, որն ամենից շատ է մնացել առանց պետական վերահսկողության: Եթե անցյալում պետությունը ստեղծել էր գաղափարապես կողմնորոշված հատուկ սոցիալական ինստիտուտներ և կազմակերպություններ, որոնք զբաղվում էին գրեթե ամբողջ երիտասարդության հարցերով՝ սկսած մանկապարտեզներից ու դպրոցներից մինչև աշխատանքային կոլեկտիվները, ապա այսօր երիտասարդների մեծ մասը մնացել է առանց հասարակական և պետական վերահսկողության:

Հայկական սոցիոլոգիական ասոցիացիան հարցում է անցկացրել Հայաստանի ողջ տարածքով՝ նվիրված երիտասարդ սերնդի արդի դիրքորոշումներին: Հարցմանը մասնակցել են 15-25 տարեկան 1065 երիտասարդներ: Հարցվածների գերակշռող մասը (62 %) իր ապագան տեսնում է հայրենիքում, 15,4 %-ը մտադրված է հեռանալ Հայաստանից, իսկ 22 %-ը հնարավոր են համարում իրենց հեռանալը: Նշենք միանգամից, որ աղջիկներն ավելի են կապված հայրենիքի հետ, քան տղաները. երկրից հեռանալու մտադրություն ունեն աղջիկների 11,2 %, տղաների 20 %: Երկրից մեկնելու մտադրության հիմնական պատճառներն են՝ ուսում ստանալը (8 %), աշխատանք որոնելը (15,8 %), գործազրկությունը (15,8 %), վատ տնտեսական վիճակը (9,8 %):

Աղյուսակ 1. Ձեր ապագան տեսնու՞մ եք այս երկրում, թե ոչ:

		Տոկոս
1	Այո	61,8 %
2	Ոչ	25,0 %
3	Դեռ չեմ կողմնորոշվել	11,5 %
4	Դժ. պատ.	1,7 %
	Ընդհամենը՝	100 %

Աղյուսակ 2. Դուք մտադի՞ր եք հեռանալ Հայաստանից մոտ ապագայում:

		Տոկոս
1	Այո, մտադիր եմ	15,4 %
2	Հնարավոր է, դեռ չեմ որոշել	22,0 %
3	Ոչ, մտադիր չեմ	48,8 %
4	Երբեք չեմ հեռանա	10,2 %
5	Չգիտեմ	3,6 %
	Ընդհամենը	100,0 %

Երիտասարդներն իրենց կյանքում ամենակարևորն են համարում.

ա. ընտանիքը (67 %),

բ. աշխատանքը (18,3 %),

գ. ընկերները, ծանոթները (9,3 %):

(Նշենք, որ աղջիկների 74,2 % կարևոր է համարում ընտանիքը, իսկ տղաների՝ 59,2 %-ը):

Աղյուսակ 3.Ասացեք խնդրեմ, ամենակարևորը ո՞րն է Ձեր կյանքում...

		Տոկոս
1	Աշխատանք	18,3 %
2	Ընտանիք	67,0 %
3	Ընկերներ, ծանոթներ	9,3 %
4	Ազատ ժամանակ	4,1 %
5	Կրոն	2 %
6	Կրթություն	7 %
7	Առողջություն	1 %
8	Սպորտ	3 %

Հարցված երիտասարդների 29,5 % մտադիր է մոտ ապագայում ընտանիք կազմել, իսկ 21,1 % արդեն ունեն իրենց ընտանիքը: Մինչդեռ 22 % դեռ չի մտածել ընտանիք կազմելու մասին, իսկ 25,9 % ընդհանրապես մտադիր չէ (տղաներ՝ 29,6 %, աղջիկներ՝ 22,5 %): Հետաքրքիր է, որ ընտանիք ունեցողների կամ ընտանիք կազմելու մտադրվածների գրեթե կեսը (45,1 %) ցանկանում է ունենալ միայն 2 երեխա: Երեք երեխա ընտանիքում ցանկանում են ունենալ (կամ արդեն ունեն) միայն 27,6 %: Ամփոփելով կարելի է ասել, որ երիտասարդների կեսն է մտադիր ապագայում ընտանիք կազմել, իսկ դրանցից երկու երրորդը ցանկանում է ունենալ 2 կամ 3 երեխա: Դա նշանակում է, որ ապագայում մեր երկրում բնակչության նույնիսկ պարզ վերարտադրությունը կարող է խափանվել:

Աղյուսակ 4. Մտադի՞ր եք մոտ ապագայում ամուսնանալ, ընտանիք կազմել:

		Տոկոս
1	Արդեն ընտանիք ունեմ	21,1 %
2	Մտադիր եմ	29,5 %
3	Դեռ չեմ մտածել	22, 0%
4	Մդադիր չեմ	25,9 %
5	Դժվարանում եմ պատասխանել	1,5 %
	Ընդհամենը՝	100,0 %

Երիտասարդների համար ֆինանսական վիճակը կարևոր նշանակություն ունի: Այսպես՝ նրանց կարծիքով՝ ուսումն ավարտելուց հետո կյանք մտնող երիտասարդն իր կյանքը կարգավորելու համար պետք է ստանա բարձր աշխատավարձ. հարցվածների 40 %-ի կարծիքով աշխատավարձը պետք է կազմի մոտ 200 000 դրամ, 20 %-ի կարծիքով այն պետք է հասնի մինչև 300 000 դրամի, իսկ 10 %-ը գտնում է, որ այն պետք է լինի մինչև 500 000 դրամ: Հասկանալի է, որ նման աշխատավարձ այսօր ոչ միայն երիտասարդ մասնագետները, այլև նույնիսկ ակադեմիկոսները չեն ստանում: Աշխատավարձի այսպիսի ակնկալիքներով երիտասարդները, երևի թե, իսկապես մեկնեն արտասահման:

Երիտասարդների 90,7 % իրենց համարում են հավատացյալ: Իսկ նրանց 90 % իրենց համարում են Հայ Առաքելական եկեղեցու հետևորդներ:

Աղյուսակ 5. Եթե համարում եք, ապա ո՞ր կրոնին եք դավանում:

		Տոկոս
1	Հայ Առաքելական եկեղեցուն	90,0 %
2	Եհովայի վկաներ	0,5 %
3	Բողոքական	0,2 %
4	Այլ	0,7 %
5	Պատասխան չկա	8,6 %
	Ընդհամենը՝	100,0 %

Այս հետազոտության արդյունքները ամենևին էլ միտված չեն ներկայացնելու հայ երիտասարդության բոլոր խնդիրները: Մեր նպատակն էր հանրության և գիտական շրջանակների ուշադրությունը հրավիրել արդի հայ երիտասարդության հրատապ և չափազանց կարևոր խնդիրների լայն քննարկմանն ու լուրջ գիտական ուսումնասիրությունների ծավալմանը:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

Անցած դարի վերջին քսանամյակից սկսած՝ հայ ավանդական ընտանիքի մոդելն ու հասարակական ընկալումները սկսել են փոփոխվել: Նորաձև ռեֆորմների և արդի սոցիալ-տնտեսական պայմանների ազդեցության ներքո տեղի են ունենում հայ ընտանիքի ավանդական հիմքերի թուլացում ու ազգային արժեհամակարգի փոփոխություն: Ծնելիության նվազման պատճառով նվազագույնի է հասել երիտասարդ ընտանիքներում երեխաների թիվը, զգալիորեն աճել է ամուսնալուծությունների, միայնակ մայրերի և անօթևան երեխաների թիվը:

Հոդվածում քննության են առնվում մեր կողմից ՀՀ-ում իրականացված սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները՝ նվիրված երիտասարդ սերնդի արդի դիրքորոշումներին: Ստացված տվյալները փաստում են, որ հայ երիտասարդության շրջանում բավականին շատ են երկրից հեռանալու, արտագաղթելու մտադրությունները: Ընդ որում երկրից մեկնելու մտադրության հիմնական պատճառներն են՝ արտերկրում ուսում ստանալը, աշխատանք որոնելը, գործազրկությունն ու վատ տնտեսական իրավիճակը: Հազար հարցված երիտասարդներից ավելի քան մեկ քառորդն իրենց ապագան չեն տեսնում մեր երկրում: Իրենց կյանքում երիտասարդներն արժևորում և ամենակարևորն են համարում, նախևառաջ, ընտանիքը, աշխատանքն ու ընկերները, ծանոթները:

Մտահոգիչ է այն, որ երիտասարդների 22 %-ը դեռ չի մտածել ընտանիք կազմելու մասին, իսկ 26% ընդհանրապես մտադիր չէ ընտանիք կազմել: Միաժամանակ, ընտանիք ունեցողների կամ ընտանիք կազմելու մտադրվածների գրեթե կեսը ցանկանում է միայն երկու երեխա ունենալ:

Ամփոփելով կարելի է ասել, որ երիտասարդների կեսն է մտադիր ապագայում ընտանիք կազմել, իսկ դրանցից միայն երկու երրորդն է ցանկանում ունենալ 2-3 երեխա: Սա իր հերթին նշանակում է, որ ապագայում մեր երկրում բնակչության նույնիսկ պարզ վերարտադրությունը վտանգված է:

Հանգուցային հասկացություններ. Երիտասարդություն, ընտանիք, սոցիոլոգիա, արժեքներ, ազգ, դիրքորոշումներ:

POGHOSYAN GEVORG

SOCIOLOGICAL SURVEY OF YOUNG ARMENIAN FAMILY

SUMMARY

Since the last two decades of the 20th century, the traditional model of Armenian family and its public perceptions have undergone changes. Under the impact of modern reforms and current socio-economic conditions, we observe weakening of traditional foundations of Armenian family and transformation of national value system. Because of the birth rate decline, the number of children in young families has reduced to minimum. Moreover, the number of divorces, single mothers and homeless children has significantly increased.

This article discusses the results of our sociological research on current life orientation of nowadays younger Armenian generation. The results obtained indicate that the migration intentions among Armenian youth are quite high. Furthermore, the main causes of migration from the country are: education abroad, unemployment and job hunt, poor economic situation. More than a quarter from out of the thousand young respondents cannot see their future in our country. According to the survey, family, work and friends are the priority values in young people's lives.

The concern shared is that 22% have not even thought about creating families of their own, while 26% of them have shown even no intention to create a family. Meanwhile, half of those, who already have families or any intentions to create them, are willing to have only two children.

In conclusion, we can state that only half of the young people surveyed intend to create families, and two-thirds of them are planning to have only 2-3 children. This means that in future, even simple reproduction of the population in our country *remains under threat.*

Key concepts: youth, family, sociology, values, nation, position.

ПОГОСЯН ГЕВОРК

СОЦИОЛОГИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ МОЛОДОЙ АРМЯНСКОЙ СЕМЬИ

РЕЗЮМЕ

Начиная с последних двух десятилетий прошлого столетия традиционная модель армянской семьи и общественные представления о ней стали меняться. Под воздействием современных реформ и существующих социально-экономических условий происходит ослабление традиционных устоев армянской семьи и трансформация национальной ценностной системы. По причине сокращения рождаемости число детей в молодых семьях сократилось до минимума, существенно возросло количество разво-

дов, число матерей-одиночек и бездомных детей.

В статье рассматриваются результаты проведенного нами в РА социологического исследования, посвященного жизненным ориентациям современным молодого поколения. Полученные результаты свидетельствуют о том, что среди армянской молодежи миграционные намерения достаточно велики. Причем основными причинами миграции из страны являются: получение образования за рубежом, безработица и поиски трудоустройства, плохая экономическая ситуация. Более четверти из опрошенной тысячи молодых людей не видят своего будущего в нашей стране. В своей жизни молодые люди особо ценят и считают важным, прежде всего семью, работу и друзей, знакомых. Не может не беспокоить то, что 22% молодых людей еще даже не задумывались о необходимости создать семью, а 26% вовсе не намерены создавать свою семью. Одновременно с этим, почти половина тех, кто уже имеет семью или намерен ее создать, проявляют желание иметь только двух. Обобщая можно сказать, что только половина опрошенной молодежи намерена в дальнейшем создавать семью, а две трети из них собираются иметь только 2-3 ребенка в семье. Это в свою очередь означает, что в будущем даже простое воспроизводство населения в нашей стране остается под угрозой.

Ключевые понятия: молодость, семья, социология, ценности, нация, взгляды